**«Ինտերակտիվ կրթության զարգացում»**

**հիմնադրամ**

## Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց 2022

# Հետազոտական աշխատանք

**Թեմա՝** 9-րդ դասարանի ռազմահայրենասիրական դաստիարակությունը Համազասպ Բաբաջանյանի անցած ուղիով

**Առարկա՝** պատմություն

**Հեղինակ՝** Լիլիթ Լոռեցյան

**Մարզ՝** Շիրակ

**Ուսումնական հաստատություն՝** Ֆոտոն վարժարան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Ներածություն .....3
Համազասպ Բաբաջանյանի կյանքն ու գործունեությունը .....4
Փառահեղ ուղու սկիզբը .....5
«Բաբաջանյանական ռեյդ» .....7
Գրավում, հաղթանակներ .....8
«Հաղթանակի ճանապարհ» .....8
Գնահատում ըստ արժանվույնի .....10
Եզրակացություն .....11
Օգտագործված գրականության ցանկը .....12

# Ներածություն

Թեմայի նպատակն է ներկայացնել աշակերտներին Հայրենական մեծ պատերազմի հերոսներից մեկի՝ մարշալ Համազասպ Բաբաջանյանի կյանքն ու անցած ռազմական ուղին։

Բաբաջանյանը, որպես հերոս սերունդների համար դարձել է սնուցող երակ, որի շնորհիվ հայ ժողովուրդը նորից ու նորից հերոսներ է ծնել։ Շատ երիտասարդների համար ոգեշնչման աղբյուր է հանդիսացել նրա վարած մարտերն ու հաղթանակները։

Մարշալ Բաբաջանյանի մասին խոսել են զինակիցներն ու ընկերները, պատմել շատ պատմություններ նրա սխրագործությունների մասին։ Ասում են՝ մարշալ Բաղրամյանը խնջույքների ժամանակ գրեթե միշտ առաջին բաժակը բարձրացրել ու խմել է Բաբաջանյանի կենացը, հիացմունքով արտահայտվել նրա մասին։

Բաբաջանյանը լինելով հասարակ գյուղացու տղա շատ է սիրել ռազմական արվեստը, և անչափ ուրախանում է, երբ զորակոչում են իրեն Կարմիր բանակ։

Այստեղից էլ սկսվում է իր ռազմական ուղին՝ հասնելով մինչև մարշալի աստիճանի։

Բաբաջանյանը մի առիթով ասել է՝ «Թույլ տվե՛ք և ես կվերադարձնեմ Արևմտյան Հայաստանը»։

Բաբաջանյանի գործունեության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար թեմայում մեծ տեղ է հատկացվել նրա կյանքին ու գործունեությանը։

**Հետազոտության նպատակն է** աշակերտների մեջ հիմնավորել հայրենասիրությունը, փորձել պարզել թե աշակերտը որքան է ճանաչում իրենց ազգի նվիրյալների, հերոսների, մարդկանց ում գնահատում և մեծարում է աշխարհը։

Հետազոտության ընթացքում անդրադարձ կարելի է կատարել և՛ Հայրենական պատերազմին, և՛ հայ մյուս հերոսներին։

## Համազասպ Բաբաջանյանի կյանքն ու գործունեությունը

*Խիզախ ու քաջերի հրամանատար է, ես նրան լավ եմ ճանաչում ու հարգում։*

*Գեորգի Ժուկով*

*Ասպետի պես ազնիվ, ճգնավորի պես համեստ, զինվորի պես պարզ ու սրտաբաց։*

*Վասիլի Գրոսման*

Հայ փառապանծ զորահրամանատար և ռազմական գործիչ, ԽՍՀՄ հերոս, «Ոսկե աստղ» մեդալի ասպետ, զրահատանքային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը ծնվել է 1906թ. փետրվարի 18-ին Ելիզավետպոլի նահանգի, Ելիզավետպոլի Գավառի Չարդախլու /Չարդախլի/ գյուղում։ Մեծ զորավարի մանկությունն անցել է բարձրաբերձ լեռների գրկում տարածված հայրենի գյուղում։ Մանկության տարիների վառ հիշողությունները Բաբաջանյանի կյանքի անբաժանելի մասնիկն էին։ Նա օժտված էր լայնախոհ մտքով ու ամեն ինչ հեռահար ընդգրկուն հայացքով դիտելու ունակությամբ։ Խորին երախտագիտությամբ և անսահման սիրով տոգորված զորավարը բնօրրանի մասին հետագայում պետք է գրեր. «Երբ մի հեռադարձ հայացք են ձգում իմ անցած մանկության օրերին, աչքերիս առաջ հառնում է հայրենի Չարդախլուն, որը նմանը չունի, ամբողջ աշխարհում։ Նրա կարոտը հաճախ է ձգում դեպի այնտեղ, դեպի իմ օրրանը, որ սնել ու գրաճանաչ է դարձրել ինձ։ Նրա մաքուր օդով եմ զորացել ու զորավոր դարձել։»

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում։ 1915թ. Բաբաջանյանների ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ Համազասպն ընդունվում է հայկական դպրոց, սակայն չի ավարտում այն, քանի որ նորից վերադառնում են գյուղ։ Մինչև 1925 թվականը զբաղվում է հողագործությամբ՝ ռազմական արվեստի սերը միշտ սրտում։ Վերջապես իրականանում է նրա երազանքը, նրան զորակոչում են Կարմիր բանակի շարքերը և 19-ամյա Համազասպն առաջին անգամ հագնում է զինվորական համազգեստ։

Համազասպ Բաբաջանյանը 1925թ. ընդունվում է Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան միացյալ ռազմական դպրոց, որը գերազանցությամբ

ավարտում է 1928թ., երբ այն արդեն տեղափոխվել էր Թիֆլիս և կոչվել Անդրկովկասյան միացյալ հետևակային դպրոց։

Անդրկովկասյան միացյալ հետևակային դպրոցն ավարտելուց հետո Համազասպ Բաբաջանյանը նշանակվում է Կովկասյան չորրորդ հետևակային գնդի դասակի հրամանատար՝ ծառայության անցնելով Անդրկովկասյան ռազմական օկրուգում։ Շատ ժամանակ չանցած նա դառնում է վաշտի, ապա՝ գումարտակի հրամանատար, գնդի շտաբի պետի օգնական և ՀՕՊ կետի շտաբի բաժնի պետ /Բաքու/, Անդրկովկասյան զինվորական օկրուգի կորպուսի շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալ։ 1938թ. հոկտեմբերից տեղափոխվում է Լենինգրադ /Սանկտ Պետերբուրգ/ և ծառայում Լենինգրադյան ռազմական օկրուգում՝ զբաղեցնելով գնդացրային գնդի հրամանատարի տեղակալի պաշտոնը։ «Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյան» գիրք։ Այս մասին պատմում է զորավարի կենսագիր Կլիմենտ Հարությունյանը։

## Փառահեղ ուղու սկիզբը

Առաջին մարտական մկրտությունը գումարտակի հրամանատար Հ. Բաբաջանյանը սկսել է 1939-1940թթ. ձմռանը խորհրդա-ֆիննական պատերազմում, ցուցաբերած քաջության ու խիզախության համար արժանացել է խրախուսանքի։ Դրանից հետո նա փոխադրվում է 19-րդ բանակ, նշանակվում շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալ։

1941թ. կեսերին 19-րդ բանակը փոխադրվում է ԽՍՀՄ արևմտյան սահման։ Այստեղ էլ այդ բանակը դիմավորում է Հայրենական Մեծ պատերազմը։

1941թ. աշնանը 395-րդ հետևակային գնդի հրամանատար (127-րդ հրաձգային դիվիզիա, 19-րդ բանակ, Արևմտյան ռազմաճակատ) նշանակված Հ. Բաբաջանյանը մասնակցել է Սմոլենսկի ուղղությամբ մղվող արյունահեղ կռիվներին։

Խորհրդային բանակը ուժեր էր կենտրոնացնում այստեղ՝ թշնամուն հակահարված տալու և դեպի Մոսկվա շարժվող հիտլերյան զավթիչների ճանապարհը փակելու համար։ Ելնյայի ուղղությամբ գործող գնդերը, դրանց թվում՝ Հ. Բաբաջանյանի զորամասը, զարգացնելով հարձակումը, մեծ կորուստներ են պատճառում հակառակորդին, ազատագրում քաղաքը և բազմաթիվ այլ

բնակավայրեր Կարմիր բանակի պատմության մեջ առաջին անգամ, մի շարք զորամասերի թվում «Գվարդիական» կոչում է շնորհվում նաև 127-րդ դիվիզիային, որի կազմում էր նաև Հ. Բաբաջանյանի ղեկավար գունդը։

Այս դրվագում պետք է ուշադրություն դարձնել, որ հայ ազգի ներկայացուցիչը իր նվիրվածության և ռազմական գաղտնիքներին լավ տիրապետելու արդյունքում, ժամանակի հզոր բանակներից մեկում կարմիրով է նշում իր անունը։ Պետք է այստեղ նշել, որ Կարմիր բանակի հրամանատարության երախտիքի խոսքերին ու պարգևներին արժանացել է, ոչ միայն Հ. Բաբաջանյանը, այլ շատ ուրիշ հայազգի նվիրյալներ։

Սմոլենսկից հետո Հ. Բաբաջանյանի գունդը մարտնչում է Դոնի Ռուստովի մատույցներում, ապա՝ Արևմտյան ճակատում։ Արիասիրտ հրամանատարը միշտ հայտնվում էր այնտեղ, ուր թեժ մարտեր էին մղվում։ 1941-1942թթ. մասնակցել է Արևմտյան (Վիտեբսկ, Սմոլենսկ, Ելնյա), ապա Բրյանսկի և Հարավային ռազմաճակատների գործողություններին։ Մոսկվայի ճակատամարտում եղել է հրաձգային գնդի հրամանատար։ Ֆաշիստական զավթիչների դեմ մղված հերոսամարտերում Հ. Բաբաջանյանը դրսևորում է իր հրամանատարական դիրքը մեծամասշտաբ մարտական գործողություններ վարելու հմտությունն ու կազմակերպչական տաղանդը։

Այս ամենը հաշվի առնելով՝ Գերագույն հրամանատարությունը Հ. Բաբաջանյանին, 1942թ. օգոստոսին, Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի արագացված դասընթացն ավարտելուց հետո նշանակում է 20-րդ մեքենայացված բրիգադի (1-ին տանկային բանակ) հրամանատար։

1943թ. ամռանը բրիգադը տեղափոխվում է Կուրսկի աղեղի հատվածը։ Կուրսկի ճակատամարտում խորհրդային 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ տանկային բանակները Բելգորոդի Պրոխորովկա բնակավայրի մոտ մասնակցել են Հայրենական մեծ պատերազմի ամենամեծ տանկային ճակատամարտին (երկու կողմից՝ մինչև 1500 տանկ և գրոհային թնդանոթներ, մեծ թվով ավիացիա)։

Կուրսկի ճակատամարտում ֆաշիստական կողմը կորցրեց 30 դիվիզիա, որոնցից 7-ը՝ տանկային, կես միլիոն զինվոր ու սպա, 100.000-ից ավելին ընկան շրջափակման մեջ։ Կուրսկի ճակատամարտում խորհրդային զորքերի տարած հաղթանակում զգալի

ավանդ են ունեցել հայ ժողովրդի զավակներ՝ Հ. Բաբաջանյանը, Ա. Խամփերյանը և ուրիշներ: 1943-1944թթ ձմռանը Բաբաջանյանի հրամանատարության տակ գտնվող զորամասերը մասնակցում էին Արևմտյան Ուկրանիայի ազատագրմանը: Պատերազմական գործողությունների ընթացքում, երբ իրադրությունը պահանջում էր, Բաբաջանյանն անմիջապես վերադառնում էր իր զորամասը, ստեղծում արագ, շարժունակ խմբեր, ապա ընտրելով թշնամուն հարվածելու գլխավոր ուղղությունը հանկարծակի շարժումով, սրընթաց գրոհումով շրջանցում էր թշնամուն, փակում նրա նահանջի ճանապարհը:

«... Ճակատամարտի մասշտաբը գերազանցում էր մարդկանց երևակայությունը: Հարյուրավոր տանկեր, թնդանոթներ վերածվում էին մետաղյա ջարդոնի լեռնակույտերի: Խավարել էր արևը, նրա սկավառակը հազիվ էր երևում արկերի ու ռումբերի պայթյունից առաջացած ծխի ու փոշու միջից», - վերհիշում էր մարշալ Բաբաջանյանը:

## «Բաբաջանյանական ռեյդ»

Հմուտ և քաջարի էր գնդապետ Բաբաջանյանը: Ֆաշիստները «Վագր» և «Հովազ» տանկերով համալրված մոտ 19 դիվիզիա էին կուտակել Կուրսկ-Բելգորոդի ուղղությամբ: Բաբաջանյանը հրաման էր ստացել ճեղքել այդ պաշտպանությունը և գրավել Կալատին քաղաքը: Կալատին քաղաքի գրավումը եղավ նրա փայլուն ռազմավարական հմտությունների արգասիքը: Նա որոշեց քաղաքը գրավել գիշերով: Բաբաջանյանը, հրահանգեց միաժամանակ միացնել բոլոր տանկերի, մեքենաների, զրահապատ ինքնագնացների լույսերը, շչակներն ու ազդանշանները: Ահա այդ գիշերվա ահարկու հարձակման գործելակերպն էլ ստացավ «Բաբաջանյանական ռեյդ» անվանումը:

Նրա մասին մի առիթով գեներալ Ի. Դրեմովը գրել է. «...1944 թվականի մարտի 21-ից մինչև ապրիլի 1-ը Ստանիսլավի ուղղությամբ մղված կռիվներում Հ. Բաբաջանյանը, որպես բրիգադի հրամանատար, աչքի ընկավ իր համարձակությամբ, վճռականությամբ, հմտությամբ: Բրիգադը դրսևորելով սրընթաց շարժունակություն, շրջանցեց հակառակորդի թիկունքը և կտրեց նրա նահանջի ուղին»:

Այդ մարտերում բրիգադն ազատագրել է ավելի քան 50 բնակավայր՝ քաղաք, ավան, գյուղ:

## Գրավում, հաղթանակներ

Հերոս հրամանատարը աչքի է ընկել Պրոսկոտովսկ-Չերնովիցկյան գործողության ժամանակ: 1944 թ. մարտի 22-24-ին մասնակցել է Աջափնյակ Ուկրաինայի Տրեմրովլյա, Կուպիչինցի, Չերբկով և Զալեշչիկի քաղաքների ազատագրմանը: Ստալինի հրամանով Բաբաջանյանի բրիգադին շնորհվել է «Զալեշչիցկյան» անվանում, զինվորներին հայտարարվել շնորհակալություն:

Մոսկվայում 1944թ. մարտի 24-ին 20-ական հրանոթային զարկերով 224 հրանոթների հրավառություն է տրվել: Զորամասերի մարտական գործողությունների հմուտ ղեկավարման, առաջինների թվում Դնեստրի հաջող գետանցման, գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարում հրամանատարության առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և մարտերում ցուցաբերած հերոսության ու խիզախության համար 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի (1-ին տանկային բանակ, 1-ին Ուկրաինական ռազմաճակատ) հրամանատար գվարդիայի գնդապետ Հ. Բաբաջանյանին ԽՍՀՄ ԳԽԽ 1944թ. ապրիլի 26-ի հրամանագրով շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում, պարգևատրվել է Լենինի շքանշանով և «Ոսկե աստղ» մեդալով: 1944թ. օգոստոսից 11-րդ գվարդիական տանկային կորպուսը՝ 11-րդ տանկային բանակի հրամանատար Հ. Բաբաջանյանը, մասնակցել է Լվով-Սանդոմիրյան:

## «Հաղթանակի ճանապարհ»

Վիսլա-Օդերյան, Արևելա-Պոմերանյան և Բեռլինյան գործողություններին՝ ազատագրելով Լովիչ, Լենչիցա, Գնեզեն, Պոզնան, Շիֆելբայն, Պուտցիգ, Կոլբերգ, Գդինյա, Կեպենիկ քաղաքները:

1944թ. Բաբաջանյանը կոկորդից վիրավորվել է: Նրան մի զինվոր 3 կմ տարածություն տանելով հասցնում է թիկունք: Ապաքինվելուց հետո նա պահանջել է իրեն հետ ուղարկել դեպի ճակատ:

1945թ. հունվարի կեսերին խորհրդային զորքերը Բալթիկ ծովից մինչև Կարպատյան լեռները հուժկու հարձակման են անցնում: Բաբաջանյանը միշտ մտածում էր. «Կգա՞ այն օրը, երբ մենք հասնենք Բեռլին»: Այդ բաղձանքն իրականացավ:

Բաբաջանյանի  կորպուսը Վիսլայի պլացդարմից սրընթաց գրոհով մասնակցում է բազմաթիվ քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը և դուրս գալիս Օդերի ափը:

Տրվում է հարձակման նոր հրաման, այս անգամ Բեռլինի վրա: Տաղանդավոր զորապետի կորպուսի տանկիստները, համառորեն հաղթահարելով հակառակորդի բոլոր արգելքները ու դիմադրությունը մի քանի օրում հասնում են Բեռլին ու մասնակցում փողոցային մարտերին: Բաբաջանյանը առաջիններից մեկն էր, որ մտավ Բեռլին: Ապրիլի 30-ին նրանք դիպուկ կրակի տակ են առնում քաղաքի կենտրոնում գտնվող կայզերական գրասենյակը: Մայիսի 2-ին Բեռլինի հիտլերյան կայազորն անձնատուր է լինում: Այդ առթիվ ԽՍՀՄ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով շատերի թվում նշվում է նաև զորապետ Բաբաջանյանի անունը: Զորավարն իր մարտիկների հետ միշտ առաջին բնագծում էր, և 1945թ. մայիսի 2-ին նրա տանկերը վերջին համազարկը տվեցին Բեռլինում՝ Ռայխստագի մոտ: Պատերազմի հաղթական ավարտից հետո Բաբաջանյանը սովորում և ավարտում է ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի ակադեմիան: Նույն թվականին էլ նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում: Տարիներ անց, մի առիթով, զրույցի ժամանակ լեգենդար զորավար Գ. Ժուկովը Բաբաջանյանի մասին ասել է. «Չափազանց խիզախ ու քաջարի հրամանատար է, ես նրան լավ եմ ճանաչում ու հարգում»:

## Գնահատում ըստ արժանվույնի

Մեծ էր նրա ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի, զրահատանկային զորքերի դերի զարգացման գործում: ԽՍՀՄ ԶՈՒ-ում զբաղեցրել է բարձր պաշտոններ՝ 1949-1950թթ բանակի շտաբի պետ, ապա՝ հրամանատար, 1950-1959թթ՝ Մերձկարպատյան ռազմական օկրուգի զորքերի 1-ին փոխհրամանատար, 1959-1967թթ՝ Օդեսայի ռազմական օկրուգի զորքերի հրամանատար, 1967-1969թթ. Մալինովսկու անվան զրահատանկային և մեքենայացված զորքերի ռազմական ակադեմիայի պետ: ԽՍՀՄ զրահատանկային զորքերի մարշալ,(28.10.1967թ.), գլխավոր մարշալ (29.04.1975թ.):

Հ. Բաբաջանյանը միշտ ակտիվ մասնակցություն է ունեցել հասարակական-քաղաքական կյանքին: Ընտրվել է Գերագույն խորհուրդների պատգամավոր:

Խորհրդային բանակի զորավարների համաստեղության ականավոր ներկայացուցիչ Հ. Բաբաջանյանը իր մահկանացուն կնքեց 1977թ. նոյեմբերի 1-ին: Թաղված է Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանատանը, որտեղ տեղադրված է հուշարձանը:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, մեդալներով, ինչպես նաև արտասահմանյան շքանշաններով և մեդալներով:

1981թ. հրատարակվել է Հ. Բաբաջանյանի «Հաղթանակի ճանապարհներ» (ռուսերեն) հուշագրությունը: Նրան է նվիրված Սադովսկու «Ծառայությունն այսպիսին է՝ հաղթել» երկը:

Բաբաջանյանի անունով են կոչվել դպրոցներ ու փողոցներ, Մոսկվայում և Երևանում, որտեղ դրված է նրա կիսանդրին, հրապարակ Մոսկվայում: Նրա ծննդավայրում բացվեց Մարտական փառքի թանգարանը, ոտեղ ներկայացված էին նաև Հ. Բաբաջանյանի և Հ. Բաղրամյանի կյանքի ու գործունեությանը նվիրված ցուցանմուշներ:

2001թ. ստեղծվել է «Մարշալ Բաբաջանյանի հիշատակի ընկերությունը»: 1970թ. նկարահանվել է «Հանդիպում մարշալի հետ» վավերագրական կինոնկարը: 2016թ. մայիսին Երևանի Ավան վարչական շրջանում տեղադրվել է Հ. Բաբաջանյանի արձանը:

Հայ ժողովրդի պատմության մեջ ոսկե տառերով է գրված Հ. Բաբաջանյանի անունը:

## Եզրակացություն

Հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային պատմության մեջ անգնահատելի է: Հայ հերոսները իրենց նվիրումն ու խիզախությունն են ցուցաբերել ռազմական գործին: Համազասպ Բաբաջանյանի օրինակով շատ հայ քաջորդիներ իրենց կյանքում ունեցան սխրանքներ և դարձան հերոսներ:

Հայրենական պատերազմը նաև հայերի պատերազմն էր, պարտության դեպքում մեր թշնամիները գլուխ կբարձրացնեին: Եվ հայազգի հերոսների անձնուրաց նվիրումի արդյունքում մենք ունեցանք փառապանծ հաղթանակ:

Սերը դեպի հայրենիքը, հայրենասիրությունը պետականության հիմքն է: Ներկայիս այս խառը ժամանակաշրջանում մեզ պակասում են Բաբաջանյաններ ու Բաղրամյաններ: Մարդիկ ովքեր հայրենիքը վեր կդասեն սեփական շահերից և ճիշտ ուղով կառաջնորդեն ժողովրդին:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում, դասարանում, յուրաքանչյուր առարկայի հիմքը պիտի լինի: Յուրաքանչյուր աշակերտ պիտի քաջ գիտակցի, որ հայրենասիրությունը սկսվում է հայրենագիտությունից: Ճանաչելով մեր հերոսներին, գնահատում ենք նրանց և օրինակ դարձնում մեզ բոլորիս համար:

## Օգտագործված գրականության ցանկը


1. «Հաղթանակի ճանապարհ» Հ. Բաբաջանյան
2. «Զրահատանկային զորքերի գլխավոր՝ մարշալի Համազասպ Խաչատուրի Բաբաջանյան» Կլիմենտ